

ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄՍՎԱ ԱՄԵՆԱՊԱՀԱՆՋՎԱԾ ԳՐՔԵՐԸ

Հայաստանի ազգային գրադարանի հոկտեմբերյան տասնյակում ընդգրկված են գոյապաշտական, փորձարարական, հեղափոխական, կենսափիլիսոփայական գրքեր: Ամենապահանջված գրքերը թե՛ ռեալիստական են, թե՛ մոգական ու ֆանտասմագորիկ, դրանցում կարմիր թելով անցնում է պայքարի գաղափարը, լինի դա պայքար ընդդեմ բռնատիրության, թե՛ ճակատագրի կամ հասարակարգի ու դրա պարտադրած կանոնների:



1. Ուիլյամ Սարգյան, «Մայրիկ, ես սիրում եմ քեզ»

Սարգյանական լուսավոր արձակի հոյակապ նմուշ «Մայրիկ, ես սիրում եմ քեզ» վեպում իննամյա աղջնակը պատմում է բեյսբոլի, թատրոնի, մեծերի ու փոքրերի աշխարհի, մի խոսքով՝ կյանքի մասին: «Երևի բոլոր պիեսներն ու վեպերը, բոլոր օպերաներն ու սիմֆոնիաները, բոլոր նկարներն ու մնացածը դրա մասին են: Ու բոլորն էլ ստեղծվում են, որովհետև ամեն ոք ուզում է կյանքին մասնակից լինել, բայց չգիտի կյանքը որն է»:

Կյանքին մանկան պարզ ու շիտակ հայացքով նայելու սարոյանական կերպը գրավել է Ազգային գրադարանի շուրջ յոթ տասնյակ ընթերցողի՝ այս գեղեցիկ թատերական վեպը հոկտեմբերյան ամենապահանջված գրքերի առաջատար դարձնելով:

2. Ալեքսանդր Շիրվանզադե, «Քառս: Պատվի համար»

«Մարկոս ադա Ալիմյանը ծանր հիվանդ էր»: Շիրվանզադեի ամենահայտնի վեպի առաջին տողը թերևս հայտնի է բոլոր հայ ընթերցողներին: Համարձակ կարող ենք ասել, որ «Պատվի համար»-ն էլ Շիրվանզադեի ամենահայտնի պիեսն է: Այս ստեղծագործությունը կարդալու համար այս ամիս Ազգային գրադարանին է դիմել վեց տասնյակից ավելի ընթերցող: Հայ սոցիալական ռեալիստական արձակի փայլուն ներկայացուցիչ Շիրվանզադեի՝ կյանքի այլանդակ կողմերի, ընչաքաղցության, շինծու հարաբերությունների մերկացումները հրատապ են մինչ օրս, և պատահական չէ, որ գրավում են կինեմատոգրաֆիստների ուշադրությունը:

3. Ֆյոդոր Դոստոևսկի, «Ուճիր և պատիժ»

Մարդկանց արժանավորների ու անարժանների տեսակների բաժանելու, նրանց ապրելու կամ մեռնելու իրավունքն իր պես «ընտրյալներին» վերապահելու տեսությունը և խոսքից գործին անցնելու ու դրանից բխող անդառնալի սխալներ գործելու թեման թերևս երբեք չի կորցնի արդիականությունը: Իր համոզմունքների համար թանկ գին վճարած Ռոդիոն Ռասկոլնիկովի տվյալտանքներն այս ամիս ծանոթացել է Ազգային գրադարանի շուրջ վեց տասնյակ ընթերցող: Ի վերջո, Ռասկոլնիկովի փուչ տեսությունը պիտի հանգեցնեք նրան, որ սպանելով ուրիշների, նա պիտի հոգեպես սպանեք ինքն իրեն: Եվ միայն քրիստոնեական պատվիրաներով ապրող Սոնյա Մարմելադովայի շնորհիվ է Դոստոևսկու հերոսը, ավելի ճիշտ կլինի ասել՝ հակահերոսը, հասկանում «արդարացված» սպանություն իրականացնելու իր ընտրած ուղու ամբողջ մոլորությունը: Ռասկոլնիկովն իր մեջ ուժ է գտնում խոստովանելու, որ չկա ոճրագործություն հանուն արդարության, հանուն բարի գործի. չարիքը չարիք է ծնում և կործանում մարդուն՝ անկախ դրդապատճառներից: Մերը փրկում է նրան՝ հնարավորություն ընձեռելով վերածնվելու և նոր կյանք սկսելու:

4. Աբբա Պրևո, «Մանոն Լեսկոյի և ասպետ դե Գրիյոյի պատմությունը»

Գրականության պատմության մեջ առաջին հոգեբանական վեպերից մեկը 18-րդ դարի Ֆրանսիայում արգելված գրքերի շարքում էր, սակայն բոլոր դարերում էլ Մանոն Լեսկոն շատ մատաղ հոգիներ է խռովել: Հերոսների հակասական բնավորությունները, բարի հակումների և վատ արարքների մշտական հակադրությունը գրավել են ոչ միայն բազմաթիվ ընթերցողների, այլև բազում կոմպոզիտորների և կինեմատոգրաֆիստների ուշադրությունը:

Ազգային գրադարանի մոտ վեց տասնյակ ընթերցող է ասպետ դե Գրիյոյի վարքի մեջ տեսել «կրքից կուրացած մի պատանու, որը հրաժարվում է երջանկությունից և իրեն հոժարակամ մատնում ծայրահեղ թշվառության. մի պատանու, որն օժտված լինելով այն բոլոր բարեմասնություններով, որոնք ամենափայլուն հասարակական դիրք էին ապահովում իր համար, այնուամենայնիվ, աննախանձ ու թափառական կյանքը գերադասում է հարստության և բնության պարզևած առավելությունից, նա, որը նախատեսում է իր դժբախտությունն ու չի ջանում խուսափել...»:

5. Ռեյ Բրեդբրի, «Լիճը և այլ պատմվածքներ»

«...Երեխաներն էլ գնդակ չէին խաղում, որովհետև քամու սուլոցը նրանց էլ էր տխրեցրել, ու նստած զգում էին, թե աշունը ոնց է անձայրածիր ափով իրենց կողմը գալիս: Տաք նրբերշիկ վաճառող կրպակները դեղին տախտակներով մեխած էին, երկար, անհոգ ամռան՝ մանանեխի, սոխի, մսի բույրը գմռած, ամառը՝ ոնց որ դագաղի մեջ մեխած: Մեկ առ մեկ ամեն ինչ փակվում էր, կողպվում, ու քամին գալիս՝ փարվում էր ավազին, սրբում-տանում էր հուլիս, օգոստոս ամիսների անթիվ, անհամար ոտնահետքերը...»:

Մի՞թե Ազգային գրադարանի ընթերցողն աշնան այս օրերին անտարբեր կմնար բրեդբրիական այս գողտրիկ տողերի նկատմամբ: Գրադարանի հինգ տասնյակ ընթերցող վայելել է համաշխարհային գրականության նշանավոր դեմքերից մեկի՝ գիտաֆանտաստիկայի դասական Բրեդբրիի կարճ պատմվածքները՝ գնահատելով պարզ գրելաոճով բարդ թեմաներ շոշափելու նրա տաղանդը: Փուլիցերյան և բազում այլ գրական մրցանակների դափնեկիր Ռեյ Բրեդբրիին կյանքից հեռացավ 2012-ին՝ իր անձնական հարուստ գրադարանը կտակելով Ուոկեզանի հանրային գրադարանին (Իլլինոյս). այստեղ էր պատանեկության տարիներին նա

ստացել իր նախնական կրթությունը. չէ՞ որ, իր իսկ խոսքերով՝ քուլեջի փոխարեն գրադարանն է ավարտել: Իր շատ ստեղծագործություններում, նաև այս ժողովածուի պատմվածքներում գրողը նկարագրել է հենց ուղեգանյան իր տպավորությունները, մանկապատանեկան առաջին փորձառությունը:

6. Խուլիո Կորտասար, «Այստեղ և հիմա»

Մի առիթով Կորտասարը խոստովանել է. «Ես պատմվածքներ էի գրում միայն ու պատմվածքներ, անողոք էի ինքս իմ հանդեպ, քանզի աչքիս առաջ ունեի Բորխեսին, նրա արտասովոր խտությունը»: Հետաքրքիր գուգադիպուոյամբ ուղիղ 4 տարի առաջ՝ 2015-ի հոկտեմբերին, արձակագիր, ներկայումս արդեն նաև Ազգային գրադարանի տնօրեն Հրաչյա Սարիբեկյանը և գրականագետ Արքմենիկ Նիկողոսյանը «Բարձր գրականություն» հաղորդաշարում քննարկել են Խուլիո Կորտասարի «Այստեղ և հիմա» պատմվածքների ժողովածուն, որում հեղինակն արժարծում է բռնատիրության դեմ պայքարող անհատների, նրանց տառապանքի, այդ թվում հայրենիքից հեռու գտնվելու տառապանքի թեման: Միշտ հետաքրքիր է երկու արվեստագետի զրույցը, ինչպես «Կտրածոներ լրագրերից» պատմվածքում է. «...Երկուսս էլ զգում էինք այն, ինչ անխուսափելիորեն զգում է մարդ, երբ մեկն իր ստեղծագործություններն է ցույց տալիս մյուսին, և վրա է հասնում գրեթե միշտ էլ դաժան այն պահը, երբ խարույկն է բոցկլտալու, կամ խոսքերով ասելիքը քողարկելով՝ հարկ է լինում նկատելու, որ ցածր թաց է և ավելի շատ ծուխ է անում, քան տաքացնում...»:

7. Յուլյա Ֆրանկ, «Միջօրեի տիկինը»

Գրական գործունեությունը բեռլինյան ռադիոհեռուստաընկերությունում որպես գրական խմբագիր ծավալած Յուլյա Ֆրանկը չէր էլ կասկածում, որ մոտ երկու տասնամյակ անց իր ստեղծագործությունները թարգմանվելու են աշխարհի 34 լեզուներով: Ազգային գրադարանի շուրջ չորս տասնյակ ընթերցողի ուշադրությունը գրված «Միջօրեի տիկինը» վեպն արժանացել է Գերմանական գրավաճառների միության գրական մրցանակին՝ որպես լավագույն գերմանալեզու ստեղծագործություն: Երկու աշխարհամարտեր վերապրած, իր փոքրիկ որդուն բախտի քմահաճույքին թողած կնոջ իրական ողբերգական պատմությունը գրելու ցանկություն է առաջացել, երբ հայրը

Յուլիային պատմել է՝ ինչպես է մայրը 1945-ին իրեն՝ 8-ամյա տղային թողել կայարանում ու ընդմիջտ հեռացել: «Միննույն ժամանակ վեպի ամբողջ պատմությունը սուկ իմ երևակայության պտուղն է», - ասում է Յուլիա Ֆրանկը: Die Zeit թերթին տված հարցազրույցում Յուլիա Ֆրանկը նշում է՝ իրեն դուր է գալիս, որ իր վեպի վերնագիրը՝ «Միջօրեի տիկինը» (Die Mittagsfrau) տղամարդկանց մեջ սացացվում է կեսօրին սպասող սիրուհու, իսկ կանանց մեջ՝ ճաշ պատրաստելու համար տուն եկած սպասուհու հետ:

8. Ժան - Պոլ Սարտր, «Սրտխառնոց»

1945-ին Պատվավոր Լեգեոնի շքանշանից, իսկ 1964-ին Գրականության Նոբելյան մրցանակից հրաժարված գրող, հրապարակախոս, փիլիսոփա, դրամատուրգ, իմացաբան, Դիմադրության մարտիկ, էքզիստենցիալիստ, սոցիոլոգ և օդերևութաբան Ժան-Պոլ Սարտրը 1938-ին «Սրտխառնոց» վեպով մեկնարկեց իր գրական գործունեությունը: Համաշխարհային նշանակալից երկերի բազում ցանկերում տեղ գտած վեպն իրավամբ համարվում է գրողի լավագույն ստեղծագործությունը, հակառակ նրան, որ ֆրանսիացի մեկ այլ էքզիստենցիալիստ՝ մոդեռնիստ գրող, բանաստեղծ, քննադատ, ջազային երգիչ, երաժիշտ Բորիս Վիանն իր «Օրերի փրփուրը» վեպի բացասական գրական կերպարներից մեկին հեգնաբար անվանել է Ժան-Սոլ Պարտր... «Ընդհանուր գաղափարներն ավելի քան դյուրամարս են ու քիմք գրգռող: Էլ չասած, որ արհեստավարժներն ու նույնիսկ սիրողները վերջում միշտ ճիշտ են դուրս գալիս: Նրանց իմաստությունը հորդորում է հնարավորինս քիչ աղմկել, հնարավորինս քիչ ապրել, թույլ տալ, որ քո մասին մոռանան: Իրենք ամենաշատը սիրում են պատմել անխոհեմ ու տարօրինակ մարդկանց մասին, որոնք ի վերջո ստանում են իրենց արժանի պատիժը: Դե իհարկե, ամեն ինչ հենց այդպես էլ լինում է, և ոչ ոք չի էլ փորձում պնդել հակառակը»: Գոյապաշտական հավերժական դեգերումները գրավել են գրադարանի շուրջ չորս տասնյակ ընթերցողի:

9. Լևոն Շահնուր, «Ճանապարհորդություն.Սիրուց առաջ»

Մի շարք գրական մրցույթների հաղթող Լևոն Շահնուրն ընթերցողին ծանոթ է գրական մամուլում տպագրված իր բազմաթիվ պատմվածքներից: 2016-ին՝ առաջին գրքի լույս

տեսելուց երեք տարի անց, հրատարակված «Ճանապարհորդություն. Միրուց առաջ» վեպի փորձարարական բնույթին, նորարարական մոտեցումներին ծանոթացել է Ազգային գրադարանի շուրջ երեք տասնյակ ընթերցող: «Հիվանդությանս ամիսները ծանր շրջան էր, առավոտից ուշ երեկո կարդում էի, մի գրքից հոգնում՝ մյուս հեղինակին էի ձեռքս վերցնում, մի քանի էջ չընթերցած՝ զգում էի, որ կողքի դրված ու փակված գիրքը նեղանում է ինձնից, լսում էի հեղինակի մոթմոթոցը, դե լա՛վ, եկա, ասում էի ու բացում նրան: Այս անգամ մյուսն էր սկսում քրթմնջալ...»: Ով-ով, բայց Ազգային գրադարանի ընթերցողները չեն նեղացնում ոչ մի գրողի ու գրքի, մեր ընթերցողը լավ գիտի, որ գրքերը «մեկը մյուսից առաջ ընկնելով ցանկանում են շուտ ընթերցվել»:

10. Ուիլյամ Ֆոլքներ, «Շառաչ և ցասում»

«Սարսափելի կարճ ժամկետում, քանի դեռ շնչում ենք և գրիչ ունեք ձեռքում, մենք ուզում ենք ցասումնալից մեղադրական ներկայացնել ժամանակակից աշխարհին կամ փախչել նրանից մագնոլիաների, ծաղրածուների և սուսերամարտի երևի թե իրականում երբեք գոյություն չունեցած, երևակայական աշխարհը: Թե՛ մեղադրանքին, թե՛ փախուստին դրդում է մեզ դյուրազգացությունը... Երկու մեթոդն էլ թերևս փորձեցի. և՛ մեղադրանքը, և՛ փախուստը»:

Համարձակորեն կարելի է ասել, որ հեղինակի կողմից իր «ամենամեծ պարտությունն» անվանած գիրքը նաև նրա ամենամեծ հաղթանակն է՝ մյուս գրքերի հետ համատեղ: Ազգային գրադարանում Ֆոլքների այս երկը սեպտեմբերին ևս ամենապահանջված գրքերի տասնյակում էր: